ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, փողի ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տնտեսական աճ: 2003 թ. տնտեսական աճը, նախորդ տարվա համեմատությամբ, կազմել է 13.9%՝ 2003 թ. դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսված 6.0%-ի փոխարեն: ՀՆԱ աճը հիմնականում պայմանավորվել է շինարարության (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 5.7 տոկոսային կետ), ծառայությունների (3.3) և արդյունաբերության (3.1) աճով: ՀՆԱ դեֆլյատորը 2003 թ., նախորդ տարվա համեմատությամբ, կազմել է 104.7%:

Սղաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2003 թ. դեկտեմբերին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 5.2% աճ, ինչը բացառապես պայմանավորվել է պարենային ապրանքների՝ հիմնականում «Հացամթերք» (8.9%), «Բանջարեղեն և կարտոֆիլ» (17.3%), «Միրգ» (26.6%) և «Ձու» (23.6%) ապրանքախմբերի գներով, որոնք ապահովել են գնաճի՝ համապատասխանաբար 1.6, 1.2, 0.9 և 0.6 տոկոսային կետերը:

2002 թ. դեկտեմբերի համեմատությամբ գների ընդհանուր մակարդակի աճը կազմել է 8.6%: Ընդ որում, սեզոնային ապրանքների գների փոփոխությունն ապահովել է սղաճի 0.83 տոկոսային կետը, պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագների փոփոխությունները՝ 0.07 տոկոսային կետը, իսկ բնականոն սղաճը՝ 7.70 տոկոսային կետը: Բնականոն սղաճի նման բարձր մակարդակը պայմանավորվել է հացամթերքի գների զգալի բարձրացմամբ, ինչը նպաստել է սղաճին 5.71 տոկոսային կետով: Նշենք նաև, որ հացամթերքի գների անփոփոխ մակարդակի պայմաններում, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ, սղաճը կկազմեր 2.9% (գտնվելով ծրագրվածի սահմաններում)՝ պաշտոնապես գրանցված 8.6%-ի փոխարեն:

Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 112.4%՝ 2002 թ. դեկտեմբերին գրանցված 101.9%-ի փոխարեն: Նշված տարբերությունը հիմնականում պայմանավորված է «Հացամթերք», «Մսամթերք», ինչպես նաև «Կենդանական և բուսական յուղ» ապրանքախմբերի գների զգալի բարձրացմամբ (համապատասխանաբար՝ 31.3%-ով, 9.5%-ով և 6.7%-ով), այն դեպքում, երբ 2002 թ. դեկտեմբերին գրանցվել էր «Հացամթերք» ապրանքախմբի գնի անկում 1.7%-ով, իսկ «Մսամթերք» ու «Կենդանական և բուսական յուղ» ապրանքախմբերի գները համապատասխանաբար աճել են 0.5%-ով և 1.3%-ով:

2003 թ. հունվար-դեկտեմբերին, 2002 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 104.7%:

Արտաքին հատված: 2003 թ. հունվար – դեկտեմբերին ապրանքների արտահանումը (FOB գներով) կազմել է 678.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 34.2%-ով: Արտահանման աճը հիմնականում պայմանավորվել է արտահանման մեջ շուրջ 51.5% կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների 35.3% աճով և 13.3% կազմող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի 101.8% աճով:

Ներմուծումը (CIF գներով) կազմել է 1269.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 28.6%-ով: Ընդ որում, ներմուծման աճը ևս հիմնականում պայմանավորվել է ներմուծման մեջ շուրջ 26% կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ծավալների 54.4% աճով: Ավելացել են նաև ներմուծման մեջ մոտ 5.8% կազմող «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և 10.4% կազմող «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալները՝ համապատասխանաբար 83.5%-ով և 28.1%-ով:

Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ցուցանիշը հաշվի առնելու՝ արտահանումն ավելացել է 33.1%-ով, իսկ ներմուծումը՝ 21.5%-ով:

Արդյունքում՝ 2003 թ. հունվար – դեկտեմբերին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել է 22.7-ով (առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» հոդվածի ցուցանիշի՝ 16%-ով) և կազմել 591.4 մլն ԱՄՆ դոլար:

2003 թ. հունվար – դեկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 578.8 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արժեզրկվելով 1%-ով: Դեկտեմբերի միջին փոխարժեքը կազմել է 565.3 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեզրկվելով շուրջ 0.1%-ով: 2003 թ. հունվար – դեկտեմբերին եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 653.8 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արժեզրկվելով 20.7%-ով: Դեկտեմբերին եվրոյի միջին փոխարժեքը կազմել է 693.4 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեզրկվելով 4.9%-ով:

Պետական հատված: Դեկտեմբերին պետական բյուջեի եկամուտների և ծախսերի փաստացի ցուցանիշները փոքր-ինչ շեղվել են ծրագրված մակարդակներից: Բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 34.3 մլրդ դրամ՝ ծրագրային ցուցանիշից շեղվելով մոտ 70 մլն դրամով, ընդ որում, հարկային եկամուտները կազմել են 26.4 մլրդ դրամ (ծրագրված 26.9 մլրդ դրամի փոխարեն), իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտները՝ 1.6 մլրդ դրամ (ծրագրային ցուցանիշին համապատասխան): Պետբյուջեի դրամաշնորհները կազմել են 6.2 մլրդ դրամ՝ ծրագրված 5.8 մլրդ դրամի փոխարեն: Ամսվա հարկային եկամուտների միջին օրական մուտքերը կազմել են 1.2 մլրդ դրամ՝ նոյեմբերի 960 մլն, հոկտեմբերի 837 մլն, երրորդ եռամսյակի միջին 867 մլն և նախորդ տարվա դեկտեմբերի 942 մլն դրամի փոխարեն:

Դեկտեմբերին ևս հարկերի հավաքագրման գործընթացը համաչափ բնույթ է ունեցել: Այսպես, ամսվա վերջին օրը հավաքագրված հարկերը կազմել են ամսվա հարկերի 13.4%-ը՝ նոյեմբերի 12.0 %-ի, հոկտեմբերի 15.1%-ի, երկրորդ և երրորդ եռամսյակների՝ համապատասխանաբար միջին 30.9%-ի և 18.8%-ի փոխարեն:

Բյուջեի ծախսերը դեկտեմբերին կազմել են 37.9 մլրդ դրամ՝ ծրագրով նախատեսված 38.7 մլրդ դրամի փոխարեն: Արդյունքում պակասուրդը կազմել է մոտ 3.6 մլրդ դրամ, որն ամսվա ընթացքում ձևավորվել է արժեթղթերի տեղաբաշխումից ստացված զուտ մուտքերի (0.2 մլրդ դրամ), զուտ արտաքին ֆինանսավորման (12.5 մլրդ դրամ), սեփականաշնորհումից մուտքերի (0.1 մլրդ դրամ) և միասնական հաշվի ավելացման (9.2 մլրդ դրամ) հաշվին:

Դրամավարկային քաղաքականություն: Դեկտեմբերը, որպես փողի պահանջարկի սեզոնային բարձր աճի ամիս, սովորաբար առանձնանում է փողի բազայի աճի համեմատաբար արագ տեմպերով: Դրանից ելնելով ԿԲ-ն նախատեսում էր փողի բազան ամսվա ընթացքում ավելացնել 16.2%-ով կամ 16.6 մլրդ դրամով՝ տարեվերջին ապահովելով 119.0 մլրդ դրամ ծրագրային ցուցանիշը: Փողի առաջարկի ընդլայնումն իրականացվելու էր հիմնականում բյուջետային մեծածավալ ծախսումների միջոցով՝ ակնկալվող ԿԲՎ V-ի հերթական մասնաբաժնի և դրամաշնորհների ստացման արդյունքում:

Ծրագրված սցենարն իրագործվել է, ինչի շնորհիվ դեկտեմբերի վերջին ապահովվել է փողի բազայի 118.6 մլրդ դրամ մակարդակ՝ նախորդ ամսվա համեմատությամբ աճելով 16.1 մլրդ դրամով: Ինչպես նախատեսվում էր, արձանագրվել է ԿԲ ՁԱԱ-ի խոշոր աճ, որը պայմանավորվել է՝ 12.2 մլրդ դրամ ԿԲՎ-ի, 3.3 մլրդ դրամ հոլանդական դրամաշնորհի, 1.0 մլրդ դրամ սվոփի մարման և ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ կողմից 2.6 մլրդ դրամի ակտիվների իրացման գործարքներով: Ընդ որում, վերջինս անդրադարձել է նաև զուտ այլ ակտիվների վրա՝ հանգեցնելով դրանց 2.4 մլրդ դրամով նվազման:

ԿԲ ՁՆԱ-ի կառուցվածքում, բացի զուտ այլ ակտիվներից, 2.3 մլրդ դրամով նվազել է ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը՝ պայմանավորված տարեվերջին ԿԲ-ում Գանձապետարանի միասնական հաշվում միջոցների կուտակմամբ:

ԿԲ ՁՆԱ-ի նվազումն ավելի քան 1.9 մլրդ դրամով չեզոքացվել է ԿԲ հանդեպ բանկերի պարտավորությունների ցուցանիշի աճով, ինչը տեղի է ունեցել հիմնականում հակադարձ ռեպո համաձայնագրերի և սվոփ գործիքի՝ 1.6 մլրդ դրամ ընդհանուր ծավալով մարման հաշվին: Միևնույն ժամանակ, «Վերականգնման վարկերի բանկի» կողմից վարկավորման ծրագրի շրջանակներում բանկերին տրամադրվել է 300 մլն դրամի վարկ: Դեկտեմբերին մեծ ծավալ են կազմել բանկերի կողմից ԿԲ-ում ավանդադրված միջոցները՝ 4.8 մլրդ դրամ, որոնք ամսվա ընթացքում ամբողջությամբ մարվել են՝ ամսվա կտրվածքով չազդելով ԿԲ հանդեպ բանկերի պարտավորությունների ցուցանիշի վրա: Արդյունքում՝ տարին ամփոփվել է ԿԲ հանդեպ բանկերի պարտավորությունների ցուցանիշի 8.6 մլրդ դրամ մակարդակով:

Տարեվերջին, ինչպես նախորդ տարիներին, փողի բազայի կառուցվածքում աճի գերակշիռ մասը՝ 12.0 մլրդ դրամը, բաժին է ընկել ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկին, ինչը պայմանավորված է բյուջետային մեծածավալ կանխիկ ծախսերով: Միաժամանակ, վերջին 5 օրվա ընթացքում, 4.0 մլրդ դրամով աճել են նաև ԿԲ-ում բանկերի թղթակցային հաշիվների միջոցները: Արդյունքում, եթե դեկտեմբերին իրացվելիության ավելցուկի միջին ամսական մակարդակը կազմել է 4.3 մլրդ դրամ, ապա վերջին օրերին աճել է ավելի քան 2 անգամ:

Փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) դեկտեմբերին աճել է 22.8 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 233.2 մլրդ դրամ: Փողի զանգվածի կառուցվածքում մեծածավալ աճ է դիտվել շրջանառությունում գտնվող կանխիկի և արտարժութային ավանդների գծով՝ համապատասխանաբար 11.4 մլրդ և 9.1 մլրդ դրամ: Դրամային ավանդներն աճել են 2.2 մլրդ դրամով բացառապես ցպահանջ միջոցների՝ 4.4 մլրդ դրամով ավելացման հաշվին, իսկ ժամկետային ավանդները նվազել են 2.2 մլրդ դրամով: Դրամային միջոցների շարժը հանգեցրել է դրամային զանգվածի 13.6 մլրդ դրամով աճի՝ ամսվա վերջին հասցնելով 133.2 մլրդ դրամի:

Շրջանառությունում կանխիկի մեծածավալ աճի և ավելցուկ իրացվելիության անհամեմատ բարձր մակարդակի ազդեցությամբ փողի և դրամային բազմարկիչները նվազել են 0.05 կետով՝ դեկտեմբերի վերջին կազմելով՝ համապատասխանաբար 1.97 և 1.12:

Ֆինանսական շուկայում դիտվել է տոկոսադրույքների նվազում: Մասնավորապես, ՊՊ առաջնային շուկայում միջին տարեկան եկամտաբերությունը նվազել է 0.7 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 9.3%: Նվազել են նաև պետական արժեթղթերի և ռեպո համաձայնագրերի երկրորդային շուկայի տոկոսադրույքները, որով պայմանավորված՝ ԿԲ-ն նվազեցրել է իր գործառնությունների տոկոսադրույքները. ռեպո համաձայնագրերինը՝ 9-ից 7% և ավանդներինը՝ 5-ից 3.5%: Արձանագրվել է նաև բանկերի կողմից ներգրավված ու տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների որոշակի նվազում, սակայն դրանց միջին կշռված մեծությունը՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը, մնացել է անփոփոխ՝ 18%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*Հունվար – նոյեմբեր*	*2003 թ. հունվար – նոյեմբերի իրական աճի ինդեքսը 2002 թ. հունվար – նոյեմբերի նկատմամբ (%)*	*Հունվար – դեկտեմբեր*	*2003 թ. հունվար – դեկտեմբերի իրական աճի ինդեքսը 2002 թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	1451254.0	115.1	1618577.0	113.9
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	104.5	-	104.7	-
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ. աճողական)* [1]	1137.6	115.8	1270.0	114.6
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	381618.3	117.9	423717.4	114.9
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	4918.6	98.7	5500.6	99.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	338154.3	102.2	410138.4	104.3
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	589921.0	114.4	710245.8	114.5
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	194604.7	150.5	225931.2	140.0
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	967028.8	109.7[1]	1163637.2	109.9[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	974792.7	111.8[1]	1158887.7	112.2[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(դրամ)*	31807.0	117.6[1]	32518.0	115.4[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1238.1	-	1236.4	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	125.3	-	124.8	-
Գործազրկության մակարդակը (%)	10.1	-	10.1	-

II. Արտաքին հատված

Անվանում	*Հունվար-նոյեմբեր*	*2003 թ. հունվար – նոյեմբերը 2002 թ. հունվար – նոյեմբերի նկատմամբ (%)*	*Հունվար-դեկտեմբեր*	*2003 թ. հունվար – դեկտեմբերը 2002 թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ. մլն ԱՄՆ դոլար)*	618.6	135.8	678.1	134.2
Ներմուծում *(ՍԻՖ. մլն ԱՄՆ դոլար)*	1154.0	132.1	1269.4	128.6
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)*	535.4	128.1	591.4	122.7

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	104.1	97.0	100.0	100.2
Փետրվար	98.5	105.7	100.3	102.5
Մարտ	99.5	100.0	100.0	100.0
Ապրիլ	102.0	102.5	100.0	98.3
Մայիս	101.2	108.1	99.9	97.4
Հունիս	101.4	95.0	99.9	81.0
Հուլիս	94.5	103.6	100.0	71.1
Օգոստոս	97.7	97.7	100.0	79.4
Սեպտեմբեր	102.5	99.3	102.3	103.3
Հոկտեմբեր	99.9	100.3	100.2	101.6
Նոյեմբեր	102.2	106.6	100.1	102.9
Դեկտեմբեր	105.2	103.0	100.0	105.3
2003 թ. հունվար – դեկտեմբերը 2002 թ. հունվար – դեկտեմբերի համեմատությամբ	104.7	108.9	101.4	109.1

IV. Սղաճ

Ժամանակաշրջան	*2001*	*2002*	*2003*	*2003*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.6	2.2	4.1	4.1
Փետրվար	-0.9	-0.7	-1.5	2.5
Մարտ	0.0	-0.6	-0.5	2.1
Ապրիլ	-0.1	2.5	2.0	4.2
Մայիս	1.6	1.7	1.2	5.4
Հունիս	-1.3	-0.5	1.4	6.8
Հուլիս	-2.7	-5.0	-5.5	1.0
Օգոստոս	-0.7	-3.0	-2.3	-1.4
Սեպտեմբեր	-1.2	-0.6	2.5	1.1
Հոկտեմբեր	0.1	0.5	-0.1	1.0
Նոյեմբեր	1.2	2.2	2.2	3.3
Դեկտեմբեր	2.4	3.6	5.2	8.6
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.9	2.0	8.6	
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.1	1.1	4.7	

V. Սպառողական գների փոփոխությունները [1]

Ցուցանիշներ	*Բնականոն սղաճ*		*Սեզոնային ապրանքներ*		*Պետ. կողմից կարգ. ծառ.*		*Սղաճ [2]*
	գների փոփոխությունը	ցուցանիշի կշռաման (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ցուցանիշի կշռաման (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ցուցանիշի կշռաման (տոկոսային կետ)	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
Հունվար	0.5	0.4	35.5	3.69	0.1	0.01	4.1
Փետրվար	-0.4	-0.3	27.0	2.81	0.1	0.01	2.5
Մարտ	-0.5	-0.4	23.6	2.45	0.1	0.01	2.1
Ապրիլ	0.6	0.5	34.9	3.63	0.2	0.02	4.2
Մայիս	1.0	0.8	43.5	4.58	0.3	0.02	5.4
Հունիս	3.4	2.7	39.2	4.08	0.3	0.03	6.8
Հուլիս	1.8	1.4	-5.3	-0.55	0.7	0.06	1.0
Օգոստոս	1.4	1.2	-24.9	-2.59	0.5	0.05	-1.4
Սեպտեմբեր	4.0	3.2	-21.1	-2.19	0.8	0.08	1.1
Հոկտեմբեր	4.4	3.5	-25.1	-2.61	0.8	0.07	1.0
Նոյեմբեր	5.3	4.3	-10.3	-1.07	0.3	0.03	3.3
Դեկտեմբեր	9.6	7.7	7.9	0.83	0.8	0.07	8.6


[1] ՀՀ ԿԲ հաշվարկներով:
[2] Նշված երեք ցուցանիշների գումարը պետք է հավասար լինի վերջին սյունակում ներկայացված սղաճի ցուցանիշին:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ						Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ[2] փոփոխությունը	Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ[2][3] փոփոխությունը
	Պետական կարճաժամկետ արժեթղթերի պորտֆելի փոփոխությունը	Պետական արժեթղթերի կարգավիճակից բխող փոփոխությունները	Պետ. արժեթղթերի գծով տոկոսային ընդհանուր	Ընդամենը	Կենտրոն. կառավ. հաշիվներ և ավանդներ դրամով	Կենտրոն. կառավ. հաշիվներ արտարժ.	ՇԻԳ-երի միջոցներ դրամով	ՇԻԳ-երի միջոցներ իսկ/փոխարժույթով	ՀՀ տոհմատ. պետ. կամ հիմնադրամի միջոցներ	Ընդամենը		
2002												
Դեկտեմբեր	0	3437	0	3437	12992	150	5	0	0	13148	**-9711**	***-9707***
2003												
Հունվար	0	1897	0	1897	14622	150	56	0	0	14828	**-12931**	***-12921***
Փետրվար	0	1791	0	1791	11839	151	105	58	0	12153	**-10362**	***-10366***
Մարտ	0	1744	0	1744	15150	151	7	0	0	15308	**-13564**	***-13617***
Ապրիլ	0	1536	0	1536	25125	151	13	0	0	25288	**-23752**	***-23758***
Մայիս	0	1431	0	1431	24004	150	66	0	0	24221	**-22790**	***-22857***
Հունիս	0	1247	0	1247	29655	158	11	0	0	29824	**-28577**	***-28751***
Հուլիս	0	1247	0	1247	28467	160	15	0	0	28642	**-27395**	***-27469***
Օգոստոս	0	1142	0	1142	31759	162	7	0	0	31929	**-30787**	***-30930***
Սեպտեմբեր	0	1094	0	1094	32557	166	16	0	0	32739	**-31645**	***-31894***
Հոկտեմբեր	0	1094	0	1094	27307	155	336	0	0	27798	**-26703**	***-26779***
Նոյեմբեր	0	1094	0	1094	30050	157	96	0	0	30303	**-29209**	***-29359***
Դեկտեմբեր	0	1047	0	1047	32357	156	41	0	0	32554	**-31507**	***-31800***


[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:
[2] Կառավարության նկատմամբ պահանջների և կառավարության ավանդների տարբերությունը:
[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ [1, 2]

(մլն դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	Կառավարության ավանդները ԿԲ-ում[4]	Ընդամենը
2002			
Դեկտեմբեր	13509	13148	26657
2003			
Հունվար	13953	14828	28781
Փետրվար	16032	12153	28185
Մարտ	15147	15308	30455
Ապրիլ	14720	25288	40009
Մայիս	14495	24221	38716
Հունիս	14692	29824	44516
Հուլիս	12178	28642	40820
Օգոստոս	12146	31929	44075
Սեպտեմբեր	12547	32739	45286
Հոկտեմբեր	11106	27798	38904
Նոյեմբեր	12848	30303	43151
Դեկտեմբեր	12279	32554	44833



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ՝ բացառությամբ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունների:

[4] Ընդգրկված են հանրապետական բյուջեի, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և ՏԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	Դ - 02	Հ – 03	Փ – 03	Մ – 03	Ա - 03	Մ – 03	Հ – 03	Հ – 03	Օ – 03	Ս - 03	Հ - 03	Ն - 03	Դ - 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)													
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***130616***	***124388***	***123570***	***116338***	***130021***	***132499***	***129437***	***138556***	***144427***	***143498***	***138128***	***138892***	***157807***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-19343***	***-24298***	***-25787***	***-23007***	***-32691***	***-32049***	***-34053***	***-36629***	***-40526***	***-40083***	***-34910***	***-36451***	***-39221***
Կառավարություն	-9711	-12931	-10362	-13564	-23752	-22790	-28577	-27395	-30787	-31645	-26704	-29209	-31507
Կենտրոնական կառավարություն	-9711	-12931	-10362	-13564	-23752	-22790	-28577	-27395	-30787	-31645	-26704	-29209	-31507
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	-58	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Բանկեր	10392	9642	4981	7500	7650	7500	6500	7600	6844	7278	6704	6664	8600
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ավանդներ (-)	0	-750	-2360	0	0	-300	-1600	-500	-500	-300	-900	-100	-100
Հակադարձ ռեպո (-)	0	0	-159	0	0	0	0	0	-1056	-822	-517	-624	0
Արժութային սվոպ (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	-279	-1012	0
Զուտ այլ ակտիվներ	-20024	-21009	-20406	-16943	-16589	-16759	-11976	-16834	-16583	-15716	-14910	-13906	-16314
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***108315***	***101173***	***98802***	***94870***	***97003***	***101528***	***98863***	***102793***	***105425***	***105184***	***104408***	***102882***	***116654***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***111273***	***100090***	***97783***	***93331***	***97330***	***100450***	***95384***	***101927***	***103901***	***103415***	***103218***	***102441***	***118586***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	92088	77756	78573	77965	76782	80450	79967	86329	88901	85537	85528	84838	96838
Պարտադիր պահուստ. (դրամով)	18829	21959	18799	14920	20079	19590	14992	15229	14621	17243	17278	17038	21047
Այլ հաշիվներ	356	375	411	446	469	410	425	369	378	635	411	565	700
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)													
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-6228***	***-818***	***-7232***	***13683***	***2478***	***-3062***	***9119***	***5871***	***-930***	***-5370***	***764***	***18915***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-4955***	***-1489***	***2780***	***-9684***	***642***	***-2004***	***-2576***	***-3897***	***444***	***5173***	***-1541***	***-2770***
Կառավարություն	-	-3220	2569	-3202	-10188	962	-5787	1182	-3392	-858	4941	-2505	-2298
Կենտրոնական կառավարություն	-	-3220	2569	-3202	-10188	962	-5787	1182	-3392	-858	4941	-2505	-2298
Բանկեր	-	-750	-4661	2519	150	-150	-1000	1100	-756	434	-574	-40	1936
այդ թվում՝ ավանդներ (-)	-	750	1610	-2360	0	300	1300	-1100	0	-200	600	-800	0
Զուտ այլ ակտիվներ	-	-985	603	3463	354	-170	4783	-4858	251	868	806	1004	-2408
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	**-**	***-7141***	***-2371***	***-3933***	***2133***	***4525***	***-2664***	***3930***	***2632***	***-240***	***-776***	***-1526***	***13772***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	-	***-11183***	***-2307***	***-4452***	***3999***	***3120***	***-5066***	***6543***	***1974***	***-486***	***-197***	***-777***	***16145***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	-	-14332	817	-608	-1183	3668	-483	6362	2572	-3364	-9	-690	12000
Պարտադիր պահուստ. (դրամով)	-	3130	-3160	-3879	5159	-489	-4598	237	-608	2622	35	-240	4009
Այլ հաշիվներ	-	19	36	35	23	-59	15	-56	9	257	-224	154	135
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)													
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-4.8***	***-0.7***	***-5.9***	***11.8***	***1.9***	***-2.3***	***7.0***	***4.2***	***-0.6***	***-3.7***	***0.6***	***13.6***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***25.6***	***6.1***	***-10.8***	***42.1***	***-2.0***	***6.3***	***7.6***	***10.6***	***-1.1***	***-12.9***	***4.4***	***7.6***
Կառավարություն	-	33.2	-19.9	30.9	75.1	-4.1	25.4	-4.1	12.4	2.8	-15.6	9.4	7.9
Բանկեր	-	-7.2	-48.3	50.6	2.0	-2.0	-13.3	16.9	-9.9	6.3	-7.9	-0.6	29.1
Զուտ այլ ակտիվներ	-	4.9	-2.9	-17.0	-2.1	1.0	-28.5	40.6	-1.5	-5.2	-5.1	-6.7	17.3
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	**-**	***-6.6***	***-2.3***	***-4.0***	***2.2***	***4.7***	***-2.6***	***4.0***	***2.6***	***-0.2***	***-0.7***	***-1.5***	***13.4***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	**-**	***-10.1***	***-2.3***	***-4.6***	***4.3***	***3.2***	***-5.0***	***6.9***	***1.9***	***-0.5***	***-0.2***	***-0.8***	***15.8***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	-	-15.6	1.1	-0.8	-1.5	4.8	-0.6	8.0	3.0	-3.8	0.0	-0.8	14.1
Պարտադիր պահուստ. (դրամով)	-	16.6	-14.4	-20.6	34.6	-2.4	-23.5	1.6	-4.0	17.9	0.2	-1.4	23.5
Այլ հաշիվներ	-	5.3	9.6	8.5	5.2	-12.6	3.7	-13.2	2.5	67.9	-35.2	37.4	23.9

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՒ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱՒ-երը հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ուսցիա ոսկի=349.3 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջին:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ[1]

(մլն դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ – 03	Փ - 03	Մ - 03	Ա - 03	Մ - 03	Հ - 03	Հ - 03	Օ - 03	Ս - 03	Հ - 03	Ն - 03	Դ - 03
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**18286**	**15367**	**20373**	**24667**	**23970**	**25678**	**30573**	**28225**	**29269**	**36011**	**32097**	**35459**	**39948**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	70982	83308	73718	75790	78023	83379	87298	82280	80566	88830	86875	90264	97306
Արտաքին պարտավոր. փոխարկելի արտարժույթով	-49365	-65466	-50842	-49028	-51467	-55854	-54151	-51171	-48225	-49438	-51894	-52048	-54608
Արտաքին պարտավորություններ դրամով	-3331	-2476	-2502	-2095	-2586	-1848	-2574	-2883	-3072	-3381	-2884	-2757	-2750
ԶՆԱ	**95940**	**94480**	**89127**	**83426**	**91841**	**92764**	**87365**	**91206**	**93498**	**94223**	**96045**	**94495**	**101173**
Կառավարություն	10569	10626	9140	11246	11580	12478	13937	17231	18743	18562	19662	16342	16902
Ջուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	11467	14600	13072	6943	11855	11680	8315	10478	11208	13464	13595	14037	16607
Պահուստային ակտիվներ	22069	25121	23960	17895	22858	22884	19879	18633	19720	22031	22052	22549	25479
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-10601	-10521	-10888	-10951	-11002	-11204	-11563	-8155	-8512	-8567	-8457	-8512	-8870
Տնտեսություն[2]	93993	89563	86579	87719	88957	92333	92585	91211	91972	92474	93649	95957	103133
Ձեռնարկություններ[3]	63218	61063	57647	56514	55822	57148	56934	55402	56706	55609	57694	57214	61090
Դրամով	15414	14356	14949	15137	14357	17322	17630	18046	19952	20558	21922	21128	22871
Արտարժույթով	43675	43211	39497	38365	38896	37589	37457	35884	35608	34624	35616	35929	38183
Արժեթղթեր	4130	3495	3201	3013	2569	2237	1847	1472	1147	427	156	157	37
Տնային տնտեսություններ	26219	23523	24377	26083	27899	29662	30626	30080	30471	30934	31182	32497	35387
Դրամով	4353	4261	4289	4495	4655	4740	5120	5284	5714	5876	6385	6758	7843
Արտարժույթով	21866	19262	20088	21589	23244	24922	25505	24796	24757	25058	24797	25739	27544
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	64	71	77	75	89	85	20	16	17	39	27	29	59
Դրամով	64	64	64	62	67	66	6	6	6	6	4	6	12
Արտարժույթով	0	7	13	13	22	19	15	11	11	33	23	23	47
Այլ ֆինանսական կազմակերպություններ[4]	-	4907	4469	4943	5043	5393	4961	5677	4742	5856	4710	6181	6559
Դրամով	-	3286	3077	3378	3744	4195	3889	1598	1101	2575	2137	2381	2144
Արտարժույթով	-	1621	1393	1565	1299	1199	1072	4079	3641	3281	2573	3800	4415
Այլ ռեզիդենտներ[5]	4492	0	8	104	104	45	45	36	36	36	35	35	37
Դրամով	3116	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Արտարժույթով	1376	0	8	104	104	45	45	36	36	36	35	35	37
Ջուտ այլ ակտիվներ	-20089	-20309	-19663	-22483	-20551	-23728	-27472	-27713	-28426	-30277	-30861	-31840	-35469
Արտաքին ակտիվներ դրամով	9	36	176	946	861	894	1345	1448	2249	2502	2515	2603	3028
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	2494	1310	4571	1237	3043	1546	2564	2042	1823	1926	1967	3215	1974
Արտաքին պարտավոր. (ոչ փոխարկելի արտարժ.)	-41	-163	-3496	-229	-160	-269	-912	-182	-525	-923	-969	-1353	-412
Ներդրումներ փայաբաժիններում	158	221	225	224	455	455	505	491	486	487	522	522	514
Միջբանկային պահանջներ	4997	4896	3476	6124	3561	3129	3924	4640	4748	3500	3707	3899	3574
Այլ ակտիվներ	30380	29789	28314	29767	30178	30110	31570	28487	29444	29869	28285	30149	27282
Միջբանկային պարտավորություններ	-4671	-4569	-3178	-5747	-3353	-2941	-3580	-4324	-4327	-3140	-3419	-3785	-3544
Դրամական շուկայի գործիքներ	0	-	-277	-479	-741	-770	-777	-770	-689	-679	-667	-681	-562
Կապիտալ հաշիվներ	-42342	-43115	-42217	-45258	-45427	-45434	-46478	-50672	-51560	-51959	-52326	-52778	-55148
Այլ պարտավորություններ	-11166	-8714	-7258	-9068	-8968	-10448	-15634	-8872	-10075	-11860	-10475	-13630	-12175
ԱՎԱՆԴՆԵՐ	**114227**	**109847**	**109500**	**108094**	**115811**	**118442**	**117938**	**119432**	**122767**	**130234**	**128142**	**129955**	**141121**
Դրամով ավանդներ	35190	32276	31931	31321	34269	38517	37150	35881	35991	40831	39142	38670	40756
Ցպահանջ ավանդներ	25682	21580	21953	20163	23030	24693	23309	23417	22982	27537	26933	26315	30618
Ժամկետային ավանդներ	9508	10696	9978	11158	11239	13824	13841	12464	13009	13294	12209	12354	10138
Ավանդներ արտարժույթով	79037	77571	77569	76773	81542	79924	80789	83551	86776	89403	89001	91285	100365
Ցպահանջ ավանդներ	36853	34178	34580	33126	37444	35902	37517	39680	40211	42531	42335	43822	51028
Ժամկետային ավանդներ	41836	43014	42594	43231	43670	43579	42841	43433	46144	46441	46216	46975	48896
Արտարժույթով ավանդների կուտակված տոկոսներ	375	378	394	415	429	443	431	438	421	431	450	489	441

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության հատվածավորման սկզբունքների:

[3] Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին, և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում հրապարակված ցուցանիշներից:

[4] Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները ներառվել են «Ձեռնարկություններ և կազմ.» տողում:

[5] Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ - 03	Փ - 03	Մ - 03	Ա - 03	Մ - 03	Հ – 03	Հ - 03	Օ - 03	Ս - 03	Հ - 03	Ն - 03	Դ - 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)													
ՋՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***148902***	***139755***	***143943***	***141005***	***153991***	***158177***	***160010***	***166781***	***173696***	***179508***	***170225***	***174352***	***197755***
ՋՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***54236***	***45447***	***41491***	***42337***	***36181***	***37567***	***34833***	***36207***	***34414***	***32545***	***39999***	***36806***	***36063***
Կառավարություն	963	-2305	-1222	-2317	-12172	-10311	-14641	-10165	-12044	-13083	-7041	-12867	-14605
Տնտեսություն [4,5]	94016	89584	86596	87739	88974	92350	92603	91233	92004	92508	93688	95993	103170
Չեռնարկ. և կազմակերպ.	67710	61063	57655	56618	55926	57193	56979	55438	56742	55645	57729	57249	61127
որից՝ կուտակված տոկոսներ	1041	933	925	961	930	959	1009	528	569	477	541	473	455
Տնային տնտեսություններ	26242	23543	24395	26103	27916	29679	30643	30102	30503	30968	31222	32534	35425
որից՝ կուտակված տոկոսներ	500	499	512	525	489	523	540	549	555	628	576	597	474
Հասարակական կազմակերպություններ	64	71	77	75	89	85	20	16	17	39	27	29	59
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ [6]	0	4907	4469	4943	5043	5393	4961	5677	4742	5856	4710	6181	6559
որից՝ կուտակված տոկոսներ	0	44	57	62	84	64	70	33	38	48	40	46	71
Զուտ այլ ակտիվներ	-40743	-41832	-43883	-43085	-40621	-44472	-43130	-44861	-45546	-46880	-46648	-46320	-52502
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ [7]	***123897***	***107407***	***107600***	***106323***	***108378***	***115539***	***113808***	***119148***	***120996***	***122064***	***120916***	***119595***	***133230***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***202588***	***184602***	***184788***	***182683***	***189493***	***195021***	***194166***	***202289***	***207400***	***211324***	***209484***	***210406***	***233197***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ [8]	***203138***	***185202***	***185434***	***183342***	***190172***	***195744***	***194843***	***202988***	***208110***	***212053***	***210224***	***211158***	***233818***
Շրջանառությունում կանխիկ դրամ	88556	74980	75523	74801	73890	76892	76479	83187	84965	81184	81670	80639	91997
Ցպահանջ ավանդներ [9]	26036	21954	22351	20608	23499	25103	23734	23758	23311	27884	27327	26865	31275
կուտակված տոկոսներ	144	21	28	26	31	46	34	39	48	49	53	58	17
Ժամկետային խնայ. և արտարժ. ավանդ.	88546	88267	87560	87932	92782	93748	94629	96042	99834	102985	101227	103654	110546
կուտակված տոկոսներ	406	579	618	633	648	677	643	660	662	680	687	694	604
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	79038	77572	77582	76774	81543	79924	80789	83578	86825	89691	89018	91300	100408
Ցպահանջ	36854	34178	34593	33126	37445	35902	37517	39707	40260	42819	42352	43837	51071
Ժամկետային	41836	43014	42594	43231	43670	43579	42841	43433	46144	46441	46216	46975	48896
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ	347	378	394	415	429	443	431	438	421	431	450	489	441
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)													
ՋՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-9147***	***4188***	***-2938***	***12986***	***4186***	***1833***	***6771***	***6915***	***5812***	***-9283***	***4127***	***23403***
ՋՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-8789***	***-3956***	***846***	***-6156***	***1386***	***-2734***	***1375***	***-1793***	***-1869***	***7454***	***-3193***	***-743***
Կառավարություն		-3268	1083	-1095	-9855	1861	-4330	4476	-1879	-1039	6042	-5826	-1738
Տնտեսություն		-4432	-2988	1143	1235	3376	253	-1370	771	504	1180	2305	7177
Չեռնարկ. և կազմակերպ.		-6647	-3408	-1037	-692	1267	-214	-1541	1304	-1097	2084	-480	3878
որից՝ կուտակված տոկոսներ		-108	-8	36	-31	29	50	-481	41	-92	64	-68	-18
Տնային տնտեսություններ		-2699	852	1708	1813	1763	964	-541	401	465	254	1312	2891
որից՝ կուտակված տոկոսներ		-1	13	13	-36	34	17	9	6	73	-52	21	-123
Հասարակական կազմակերպություններ		0	6	-2	14	-4	-65	-4	1	22	-12	2	30
որից՝ կուտակված տոկոսներ		0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ		4907	-438	474	100	350	-432	716	-935	1114	-1146	1471	378
որից՝ կուտակված տոկոսներ		44	13	5	22	-20	6	-37	5	10	-8	6	25
Զուտ այլ ակտիվներ		-1089	-2051	798	2464	-3851	1343	-1732	-685	-1334	232	328	-6182
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ		***-16490***	***193***	***-1277***	***2055***	***7161***	***-1732***	***5341***	***1848***	***1068***	***-1148***	***-1321***	***13635***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		***-17986***	***186***	***-2105***	***6810***	***5528***	***-855***	***8123***	***5111***	***3924***	***-1840***	***922***	***22791***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ		***-17936***	***232***	***-2092***	***6830***	***5572***	***-901***	***8145***	***5122***	***3943***	***-1829***	***934***	***22660***
Շրջանառությունում կանխիկ դրամ		-13576	543	-722	-911	3002	-413	6708	1778	-3781	486	-1031	11358
Ցպահանջ ավանդներ		-4082	397	-1743	2891	1604	-1369	24	-447	4573	-557	-462	4410
կուտակված տոկոսներ		-123	7	-2	5	15	-12	5	9	1	4	5	-41
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-279	-707	372	4850	966	881	1413	3792	3151	-1758	2427	6892
կուտակված տոկոսներ		173	39	15	15	29	-34	17	2	18	7	7	-90
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1466	10	-808	4769	-1619	865	2789	3247	2866	-673	2282	9108
Ցպահանջ		-2676	415	-1467	4319	-1543	1615	2190	553	2559	-467	1485	7234
Ժամկետային		1178	-420	637	439	-91	-738	592	2711	297	-225	759	1921
Արտարժույթով ավանդների կուտակ. տոկոսներ		31	16	21	14	14	-12	7	-17	10	19	39	-48

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)													
ՀՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		**-6.1**	**3.0**	**-2.0**	**9.2**	**2.7**	**1.2**	**4.2**	**4.1**	**3.3**	**-5.2**	**2.4**	**13.4**
ՀՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		**-16.2**	**-8.7**	**2.0**	**-14.5**	**3.8**	**-7.3**	**3.9**	**-5.0**	**-5.4**	**22.9**	**-8.0**	**-2.0**
Կառավարություն		-339.4	-47.0	89.6	425.3	-15.3	42.0	-30.6	18.5	8.6	-46.2	82.7	13.5
Տնտեսություն		-4.7	-3.3	1.3	1.4	3.8	0.3	-1.5	0.8	0.5	1.3	2.5	7.5
Ձեռնարկ. և կազմակերպ.		-9.8	-5.6	-1.8	-1.2	2.3	-0.4	-2.7	2.4	-1.9	3.7	-0.8	6.8
Տնային տնտեսություններ		-10.3	3.6	7.0	6.9	6.3	3.2	-1.8	1.3	1.5	0.8	4.2	8.9
Հասարակական կազմակերպություններ		10.9	8.5	-2.6	18.7	-4.5	-76.5	-20.0	6.3	129.4	-30.8	7.4	103.4
Այլ ֆինանսական կազմակերպություններ		100.0	-8.9	10.6	2.0	6.9	-8.0	14.4	-16.5	23.5	-19.6	31.2	6.1
Զուտ այլ ակտիվներ		2.7	4.9	-1.8	-5.7	9.5	-3.0	4.0	1.5	2.9	-0.5	-0.7	13.3
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [7]		**-13.3**	**0.2**	**-1.2**	**1.9**	**6.6**	**-1.5**	**4.7**	**1.6**	**0.9**	**-0.9**	**-1.1**	**11.4**
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		**-8.9**	**0.1**	**-1.1**	**3.7**	**2.9**	**-0.4**	**4.2**	**2.5**	**1.9**	**-0.9**	**0.4**	**10.8**
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [8]		**-8.8**	**0.1**	**-1.1**	**3.7**	**2.9**	**-0.5**	**4.2**	**2.5**	**1.9**	**-0.9**	**0.4**	**10.7**
Շրջանառությունում կանխիկ դրամ		-15.3	0.7	-1.0	-1.2	4.1	-0.5	8.8	2.1	-4.5	0.6	-1.3	14.1
Ցպահանջ ավանդներ		-15.7	1.8	-7.8	14.0	6.8	-5.5	0.1	-1.9	19.6	-2.0	-1.7	16.4
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-0.3	-0.8	0.4	5.5	1.0	0.9	1.5	3.9	3.2	-1.7	2.4	6.6
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1.9	0.0	-1.0	6.2	-2.0	1.1	3.5	3.9	3.3	-0.8	2.6	10.0
Ցպահանջ		-7.3	1.2	-4.2	13.0	-4.1	4.5	5.8	1.4	6.4	-1.1	3.5	16.5
Ժամկետային		2.8	-1.0	1.5	1.0	-0.2	-1.7	1.4	6.2	0.6	-0.5	1.6	4.1

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքով:

[3] ԿԲ ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ուսցիա ոսկի= 349.3 ԱՄՆ դոլար:

[4] Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին, և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում հրապարակված ցուցանիշներից:

[5] Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության հատվածավորման սկզբունքների:

[6] Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները ներառվել են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

[7] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[8] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[9] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,2]

(մլն դրամ)

Ժամկետ	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2002	88556	25892	114448	9449	123897	78691	202588
2003							
Հունվար	74980	21933	96914	10494	107408	77194	184602
Փետրվար	75523	22323	97846	9754	107600	77188	184788
Մարտ	74801	20582	95383	10940	106323	76359	182682
Ապրիլ	73890	23468	97358	11020	108378	81114	189492
Մայիս	76892	25057	101949	13590	115539	79481	195020
Հունիս	76479	23700	100179	13629	113808	80358	194166
Հուլիս	83187	23719	106906	12242	119148	83140	202289
Օգոստոս	84965	23263	108228	12768	120996	86404	207400
Սեպտեմբեր	81184	27835	109019	13045	122064	89260	211324
Հոկտեմբեր	81670	27274	108944	11972	120916	88568	209484
Նոյեմբեր	80639	26807	107446	12149	119595	90811	210406
Դեկտեմբեր	91997	31258	123255	9975	133230	99967	233197

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,3]

(մլն դրամ)

Ժամկետ	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2002	88556	26036	114592	9508	124100	79038	203138
2003							
Հունվար	74980	21954	96935	10695	107630	77572	185202
Փետրվար	75523	22351	97874	9978	107852	77582	185434
Մարտ	74801	20608	95409	11158	106567	76774	183342
Ապրիլ	73890	23499	97389	11239	108628	81543	190172
Մայիս	76892	25103	101995	13824	115819	79924	195744
Հունիս	76479	23734	100214	13840	114054	80789	194843
Հուլիս	83187	23758	106945	12464	119409	83578	202987
Օգոստոս	84965	23311	108276	13009	121285	86825	208110
Սեպտեմբեր	81184	27884	109068	13294	122362	89691	212053
Հոկտեմբեր	81670	27327	108997	12209	121206	89018	210224
Նոյեմբեր	80639	26865	107504	12354	119858	91300	211158
Դեկտեմբեր	91997	31275	123272	10138	133410	100408	233818

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:


[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[3] Ավանդների մեջ կուտակված տոկոսները ընդգրկված են:


[4] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):


[5] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[6] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):



Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
մլն դրամ
125000
121500
118000
114500
111000
107500
104000
100500
97000
93500
90000
07.01.03
17.01.03
29.01.03
10.02.03
18.02.03
28.02.03
13.03.03
25.03.03
02.04.03
14.04.03
25.04.03
07.05.03
20.05.03
31.05.03
11.06.03
23.06.03
03.07.03
15.07.03
25.07.03
07.08.03
19.08.03
29.08.03
08.09.03
18.09.03
29.09.03
09.10.03
21.10.03
31.10.03
12.11.03
24.11.03
02.12.03
12.12.03
24.12.03
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն դրամ
120000
105000
90000
75000
60000
45000
30000
15000
0
Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ
99 00
01
02
03
Կանխիկ դրամ ԿԲ-ից դուրս
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն դրամ
300000
250000
200000
150000
100000
50000
0
Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ
99 00
01
02
03
Շրջանառությունում կանխիկ դրամ
Ցպահանջ ավանդներ
Ժամկետային ավանդներ
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
100
90
80
70
60
50
40
30
20
10
0
97
98
99
00
01
02
03


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
100
80
60
40
20
0
97
98
99
00
01
02
03



Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
30
25
20
15
10
5
0
-5
-10
-15
99 00
01
02
03
Փողի բազա
Սղաճ


Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
15
10
5
0
-5
-10
-15
99 00
01
02
03
Փողի զանգված
Սղաճ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1,2]

(մլն դրամ)

Ցուցանիշներ	2002	2003											
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Կենտրոնական բանկի ՁԱԱ	130616	124388	123570	116338	130021	132499	129437	138556	144427	143498	138128	138892	157807
Առևտրային բանկերի ՁԱԱ	18286	15367	20373	24667	23970	25678	30573	28225	29269	36011	32097	35459	39948
Ընդամենը	148902	139755	143943	141005	153991	158177	160010	166781	173696	179508	170225	174352	197755
Կենտրոնական բանկի ՁԱԱ [3]	***131168***	***125064***	***124292***	***117131***	***130751***	***133131***	***130075***	***139402***	***145286***	***144480***	***139101***	***139911***	***158637***




[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:
[2] ՁԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՁԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, առևտրային բանկերի ՁԱԱ-ն փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:
[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:


ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]


(մլն դրամ)


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ դրամ	M1	M2	M2X
2002	97809	76000	100884	110969	192868
2003					
Հունվար	102604	75141	97741	108861	184456
Փետրվար	102879	79241	104165	113375	191036
Մարտ	98040	77913	101420	111656	186172
Ապրիլ	101638	77628	103055	113471	198658
Մայիս	104163	80528	106122	119157	201418
Հունիս	99945	80150	104275	117911	199269
Հուլիս	102036	83124	106649	119521	202645
Օգոստոս	102625	84777	106290	119926	203439
Սեպտեմբեր	100810	80224	104831	118100	205344
Հոկտեմբեր	99678	79675	105851	117590	204834
Նոյեմբեր	98943	78832	103486	115224	203440
Դեկտեմբեր	104237	78953	108647	119328	222009

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:
Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ, համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: ՀՀ ԿԲ տեղեկագրի սույն համարում փողի ագրեգատների թվային շարքերը վերանայված են, և հարթեցումների համար հիմք են ընդունված 1997 - 2002 թթ. շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն դրամ
120000
100000
80000
60000
40000
20000
96
97
98
99
00
01
02
03
Փողի բազայի փաստացի շարքեր
Փողի բազայի հարթեցված շարքեր


Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակներ
մլն դրամ
90000
75000
60000
45000
30000
15000
0
95
96
97
98
99
00
01
02
03
Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի շարքեր
Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի հարթեցված շարքեր


Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն դրամ
130000
110000
90000
70000
50000
30000
10000
95
96
97
98
99
00
01
02
03
Դրամային զանգվածի փաստացի շարքեր
Դրամային զանգվածի հարթեցված շարքեր


Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն դրամ
220000
200000
180000
160000
140000
120000
100000
80000
60000
40000
20000
95
96
97
98
99
00
01
02
03
Փողի զանգվածի փաստացի շարքեր
Փողի զանգվածի հարթեցված շարքեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	2002[3]	2003											
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ[5]
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	431.3	420.0	417.8	403.6	440.0	453.6	441.2	455.1	457.4	461.1	453.6	458.0	503.7
Համախառն միջազգային պահուստներ	441.7	430.4	428.2	413.2	448.9	461.1	448.7	462.8	464.9	468.7	461.5	465.9	511.9
Ոսկի	15.7	16.3	15.9	14.9	14.9	16.2	15.4	16.1	16.7	17.1	17.6	17.8	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	30.1	26.2	26.1	26.0	23.6	24.2	20.1	18.0	15.4	13.2	10.8	10.8	6.5
Արտարժույթ[2]	395.9	387.8	386.3	372.2	410.4	420.7	413.2	428.7	432.9	438.5	433.2	437.3	505.4
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*[4]	***432.3***	***421.4***	***419.3***	***405.2***	***441.7***	***455.3***	**442.9**	**456.8**	**459.1**	**463.2**	**455.9**	**460.4**	**505.8**


[1] *Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2002 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.3595 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այս պատճառներով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստները տարբերվում են 2002 թ. դեկտեմբեր, 2003 թ. հունվար և փետրվար ամիսներին «ՀՀ ԿԲ տեղեկագիր» պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:*

[4] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*

[5] *Նախնական. ներառված չեն ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2001[3]	2002[3]	2003											
	Դ	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Վարկեր [1]														
Իրավաբանական անձանց														
ՀՀ դրամով	27.5	23.4	20.0	26.7	20.7	17.5	24.2	20.1	28.8	27.3	25.6	23.5	24.3	21.7
ԱՄՆ դոլարով	20.3	19.4	18.9	20.2	20.2	22.7	14.6	26.4	18.1	18.6	19.5	16.0	16.2	17.7
Ֆիզիկական անձանց														
ՀՀ դրամով	30.2	22.5	22.5	25.6	27.2	25.3	17.5	26.8	27.1	27.2	23.6	7.0	24.4	23.9
ԱՄՆ դոլարով	35.5	33.5	34.6	28.7	35.9	34.6	34.9	34.3	33.5	33.2	31.2	30.7	27.2	25.4
Ավանդներ [1]														
Իրավաբանական անձանցից														
ՀՀ դրամով	15.0	8.3	7.8	8.5	7.9	8.0	7.8	5.5	8.7	9.3	8.9	4.7	9.3	6.1
ԱՄՆ դոլարով	9.7	2.0	4.3	2.3	5.7	3.0	2.3	5.6	3.2	4.7	0.0	3.4	1.0	6.7
Ֆիզիկական անձանցից														
ՀՀ դրամով	14.6	9.8	8.9	8.8	7.8	8.2	9.2	6.7	5.7	6.5	5.9	8.6	5.8	6.5
ԱՄՆ դոլարով	10.8	5.6	4.7	3.5	7.0	6.0	6.4	6.6	6.0	6.6	6.2	5.5	5.8	6.1
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	15.0	13.5	13.5	10.0	10.0	10.0	10.0	10.0	10.0	9.0	9.0	9.0	9.0	7.0
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	8.0	6.0	6.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	3.5
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	30.0	28.0	28.0	20.0	20.0	20.0	20.0	20.0	20.0	20.0	20.0	20.0	20.0	20.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	16.4	15.6	14.9	12.8	13.5	14.7	13.5	11.8	10.6	10.6	10.5	10.1	10.1	9.7
Սղաճ	2.9	2.0	4.1	-1.5	-0.5	2.0	1.2	1.4	-5.5	-2.3	2.5	-0.1	2.2	5.2

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


[1] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:


[2] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են վերջին ամիսների տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ-02	Հ-03	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
1	-	-	-	-	589.02	-	-	584.43	573.76	580.66	570.57	-	566.17
2	585.81	-	-	-	588.56	586.70	585.27	584.81	-	580.52	570.57	-	566.55
3	585.81	-	585.46	588.85	588.56	-	585.27	584.51	-	580.87	570.93	559.11	566.55
4	586.51	-	584.65	588.99	588.43	-	585.00	584.10	573.76	581.43	-	559.67	566.34
5	586.51	-	585.52	-	-	586.51	585.00	-	573.28	581.43	-	560.55	566.53
6	586.15	-	584.70	588.99	-	586.51	585.00	-	574.75	-	570.93	561.50	-
7	-	585.10	586.00	588.85	588.21	587.18	-	583.81	574.88	-	572.60	563.00	-
8	-	586.63	-	-	588.00	587.18	-	584.03	576.91	580.43	572.39	-	566.53
9	586.44	579.03	-	-	588.89	-	584.74	583.51	-	580.98	567.12	-	566.53
10	586.79	582.48	586.41	589.25	589.03	-	584.59	583.02	-	579.72	567.12	563.82	568.01
11	586.92	-	586.10	589.88	588.88	-	584.94	583.02	576.91	579.72	-	565.17	567.71
12	586.92	-	585.89	590.23	-	586.67	585.07	-	577.48	573.58	-	565.45	567.34
13	586.35	582.48	586.23	590.93	-	587.13	585.07	-	577.48	-	567.12	565.45	-
14	-	582.48	585.81	591.53	588.69	586.60	-	582.52	577.48	-	566.78	565.58	-
15	-	582.17	585.81	591.53	588.11	586.73	-	581.96	578.29	573.58	566.78	-	566.90
16	585.51	581.00	585.81	591.53	588.31	586.12	585.42	580.49	-	573.86	560.84	-	566.74
17	585.15	582.00	585.96	591.76	588.23	-	585.12	579.03	-	567.13	560.84	565.58	566.12
18	584.88	-	585.96	591.76	588.01	-	585.48	577.52	578.46	567.58	-	565.58	565.79
19	584.00	-	-	591.76	-	585.96	585.48	-	578.46	569.70	-	565.58	565.21
20	582.52	582.00	586.21	591.61	-	585.80	585.48	-	578.86	-	560.84	565.19	-
21	582.52	582.00	586.56	591.51	587.54	585.38	-	576.40	579.12	-	560.84	565.04	-
22	-	582.00	586.56	-	587.67	585.33	-	575.72	580.56	570.47	557.11	-	563.88
23	582.16	582.25	-	-	587.67	585.11	585.97	574.97	-	571.05	557.11	-	562.16
24	582.16	584.00	587.36	591.22	-	-	585.74	574.61	-	571.20	557.51	565.94	561.52
25	582.22	584.00	587.70	590.64	587.54	-	585.54	574.48	579.96	570.95	-	566.43	562.00
26	582.00	-	587.81	590.55	587.54	585.00	585.10	-	580.59	571.44	-	566.60	562.83
27	582.20	584.23	588.12	590.23	-	584.45	585.16	-	581.30	571.44	557.91	566.42	562.83
28	582.20	-	588.46	589.52	587.37	-	585.16	574.48	581.21	-	557.91	566.17	562.83
29	583.65	584.44	-	589.52	587.15	584.69	585.16	574.14	581.21	571.95	558.34	566.17	563.27
30	584.89	584.64	-	589.52	587.01	585.04	584.80	574.00	581.21	570.13	558.34	566.17	566.00
31	-	584.73	-	589.52	-	585.04	-	574.00	581.21	-	558.34	-	-
ժամանակահատվածի վերջ	584.89	584.73	588.46	589.52	587.01	585.04	584.80	574.00	581.21	570.13	558.34	566.17	566.00
ժամանակահատվածի միջին	584.59	583.03	586.32	590.40	588.11	585.96	585.20	579.55	578.14	574.77	563.86	564.55	565.26





ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ[1]

Ժամկետ		1-3 ամիս[2] (ներառյալ 91-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2003	Դեկտեմբեր	-	-	-	-	-	-

Ժամկետ		3-6 ամիս[2] (ներառյալ 182-օրյա)					
